

նեացդ ուրացեալ ես յանձնէդ , այսինքն է զսկզբնական քո լեզուն , առանց որոյ ոչ հայ ես և ոչ անհայ : Եւ յիշի որ գիտակի էք և իմաստունք , օգնական լերուք եղբարցդ անգիտաց . լերուք նոցա նոր Երամ , նոր Սեւրովպ , այլ ոմն Սմբատ Բագրատունի , և տուք ՚ի բերանս նոցա զլեզուն հայկայ , զլեզուն Վոյի , զլեզուն Երամայ , զլեզուն ճարտարապետին խօսից նայ :

Եւ յետ այսր ամենայնի , ասիցէ որ , եղև ես կատարեալ հայրենասէր և օգտաբեր ազգին : Տակաւին ոչ զի կայ մնայ գործ մեծագոյն յօգուտ ազգային . այս իսկ է հայրենասէր լինել ոչ առանձինս միայն , այլ ազգովին . զի առաքինութեանս այսմիկ առաւել քան թէ այլում ճահաւոր է հասարակաց լինել , զի մի ունայնասցին վաւտակք մենաւորին : Ի կենդանութիւն ազգի՝ անկ է ընդհանուր ծաւալել զշունչն կենդանարար : Եւ քեզ ասեմ հայրենասէրդ , եթէ իմաստուն իցես , հաղորդ արա իմաստութեան քում և զտգէտն , և տարածես զսէր հայրենեաց . աւագ իցես , էջ առ անաւագսն և ՚ի վեր ամբարձ զնոսա . հզօր իցես , ձեռն տուր անզօրաց . գերածայրել զազգն փափաքիցես , մի առ մի ընդ աստիճանսն ՚ի վեր զնա խաղացո . զքաղց նորա հարկանել կամիցիս , նախ կաթն և հաց ջամբեա , ապա թէ կերակուր հաստատուն : Եւ մի և մի բնաւ առ լքումն ինչ թուիցին ձեզ ասացեալքս , քաւ յինէն , զի ինձ անհաւատութիւն իմն է հայրենեաց սիրոյն մոռացումն , այլ ոչ փոքր ինչ քան զայն և շաղփաղփ և շողմոգ հայրենասիրութիւն ոմանց շաղաւաշուրթն բերանոց , որ բանիւ լոկով և ըղձիւք փափաքանաց համարին ուղղել զամենայն : Եւ , մի որ լըբցի , այլ բուռն հարցէ ամենայն որ յօգուտ ազգին որով իւրիք և ձեռնհասն իցէ , որ հանձարով՝ հանձարով , որ իշխանութեամբ՝ իշխանութեամբ , որ յարուեստէ՝ յարուեստէ , որ ընչիւք՝ ընչիւք :

Եւ զի՞նչ մեծ , զի՞նչ սքանչելի քան զայս , զի և այսպիսեօք դուզնաբէիւք վաստակօք ոչ միայն հայրենասէր որ լինիցի օգտակար ազգին , այլ և արժանի հայր հայրենեաց անուանելոյ , հաւասար Տիգրանայ և Տրդատայ , Վրիգորի և Ներսիսի : Ո՛հ եթէ հայոյն ամենայն սրտիւ վասն օգտի իւրոյ ջանացեալ էր , քանի՞ երջանիկ էր այսօր տուն թորգոմայ . և եթէ յիշէր զի Ողիւսէս ոմն զանմահու թեան պարգևս , Սահանն Եմատունի զթագ Երչակունեաց և Սմբատ զարև իւր ուրացան վասն օգտի հայրենեաց , ոչ գտանէր անշուշտ վատութիւն մեծ քան զձեռնթափն լինել յարդար օժանդակութենէ իւրոց հայրենեաց :

(Եւստիս Եսայի) :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Փոխ Կալու Տարդդ Ճանչիցի :

Եւստիս մէկը օր մը կը մօտենայ մէկուն ու կ'ըսէ . « Ինչդիրք մը ունիմ հրամանոցդ , կ'աղաչեմ որ չէ չըսես » : — « Ի՞նչ կը հրամես » , կ'ըսէ մէկալը : « Եւ ինչդիրք մը քիչ մը ստակ փոխ տաս ինձի » : — « Թողութիւն կ'ընես , պարոն , կ'ըսէ . ես զհրամանքդ ամենեւին չեմ ճանչնար » : Պատասխան կուտայ մէկալը թէ « Ես ալ անոր համար է որ հրամանքէդ կը խնդրեմ . վասն զի զիս ճանչցողներուն մէկն ալ չուզեց ինձի փոխ տալ » :